

առնեն ամեն բանս Վայ հասարակութեան աղ-
քատ դասին. հարուստը զեռ կարող է իր պարէ-
նը պատրաստել, իսկ դա ինչ անէ: Սրա վրա հը-
րաւիրում ենք այն անձանց ուշադրութիւնը, ո-
րոնց պարտքն է հողաւ քաղաքի տնտեսական
զրուկեան վրա:

Բայց կարծում ենք, թէ այդ անկարգութիւն-
ները կարող են վերջանալ բոլորովին միայն այն
ժամանակ, երբ քաղաքն ինքնավարութիւն կը
ստանայ, որից զեռ զուրկ է:

Յայտնի է, որ քաղաքի մէջ ինքնավարութիւն
մտցնելու խնդիրը պարզելու համար կազմված
յանձնաժողովը անս արդէն 2—3 ամիս է վեր-
ջացրել է իր գործը և գտել է, որ քաղաքային
ինքնավարութիւն մտցնել ձեռքանդրապօղում
ոչ թէ անկարելի, այլ հնչու է և հարկաւոր: Յանձ-
նաժողովն իր կազմած տեղեկագիրը մատուցել
է, ուր հարկն է, բայց լուսմ ենք, որ այդ տե-
ղեկագիրը զեռ չէ հասցրած պ. նահանգապետին,
այլ մնում է քաղաքում մի մասնաւոր անձի
մօտ: Քաղաքացիք միտք ունեն խնդիր ներկա-
յացնել (այսօր լսեցի, որ խնդիրն արդէն պատ-
րաստ է, բայց ուղարկած է, թէ ոչ, այդ չը գի-
տեմ հաստատ) պ. նահանգապետին և խնդրել
որ ուշադրութիւն դարձնէ այս կարեւոր հարցի
վրա: Քաղաքային ինքնավարութիւն ունենալու
պահանջը հետզհետեւ զգալի է դառնում մեզ:

Իշխական դպրոցի բացման հարցը, կարծես,
քայլ առ քայլ մօտենում է իրագործման: 7000
րուր տարեկան նպաստը, որ քաղաքը չարունակ
պէտք է անէ զանազանին իշխական դպրոցի
համար, արդէն պատրաստի է, մնում է եռան-
դազոյն փոշի գործ մասին:

Դեռ չը վերջացրած նամակս, չեմ կարող լուս-
թեամբ անցնել մի դէպք, որ մեծ դայթակ-
ղութեան և տիրութեան մէջ գցեց մեր խա-
ղաղ հասարակութեանը: Յունիսի 16-ին Արդու-
թեան օրինորդական դպրոցում հարցաքննութիւն
էր աշխարհագրութեան: Ներկայ էին նորեկ ա-
ռաջնորդական փոխնորդը, բաւականին հանդի-
սականներ, հոգաբարձուք և այլն: Պէտք է ասել
որ (ինչպէս պատմում են մի քանի տրամանա-
ւատ անձինք) օրինորդական մի քանիսը թղլի են
պատասխանել ուսուցչի առաջարկած հարցերին,
որի պատճառով տեսլի և աշխարհագրութեան ու-
սուցչի մէջ սաստիկ կռիւ է բացվել:

3.

ՆԱՄԱԿ ԿԱՐԱԿՈՒՐՏԻՑ

Յուլիսի 20

Բարեհաճեցէք տեղ տալ ձեր պատուական լը-
րագրում այս մի քանի խօսքերին:

Թէ որքան հարկաւոր է ուշադրութիւն դարձ-
նել երբեմն ժողովրդական բժշկական հնարքնե-
րի վրա, որոնք բժշկներին շատերից արհամար-
հուած և արարածոված են գործածութիւնից, երե-
ւում է հետեւել փաստից:

Բժիշկ Պուտեյով հաղորդում է «Врачъ» շա-
բաթական թերթի խմբագրին՝ պրոֆեսոր Մանա-
սէյնին (№ 26. 1881), որ նրան կողմանում և
Աստրախանում պատահեց նկատել մի ժողովր-
դական բժշկական հնարքի զարմանալի յաջող
ներդրութիւնը հասարակ և արիւնխառան
թանչքում (поносъ), ինչպէս հասակաւորներին,
նոյնպէս և մանուկներին վրա: Այս հնարքն է
գմուռ կարմիր, մանուկն ու մեծն տեսակը № 2:
Սաստիկ արիւնխառան թանչքը, որի վրա ոչ մի
դեղ չէր ներդրում և յոյս չը կար արդէն
բժշկելու, բոլորովին դադարեց սալով հիւան-
դից գմուռից բերված թողը մօտաւորապէս մի
մի գրան երկու. անգամ: Մի և նոյն արդէն մի
տարեկան հիւանդի վրա Պուտեյովը գտավ պ. Պու-
տեյովին յաջողվեց երկու անգամ տեսնել նոյն
հնարքի շուտ ներգործութիւնը: Այս հնարքը,
ասում է Պուտեյով, արժանի է, որ ենթար-
կվի ինչպէս քիմիական հետազոտութեանը,
նոյնպէս փորձերի՝ կենդանիների և հիւանդների
վրա:

Յանկալի կը լինէր շատ, կաւելացնենք մեզա-
նից, որ Թիֆլիսում, որտեղ ամառը շատ մա-
նուկներ են մահի գոհ դառնում հասարակ թէ
արիւնխառան թանչքից, բժշկները փորձէին այս
հնարքը և հաղորդէին իրանց նկատողութիւնը:

Բժիշկ Միրիմանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սանահնից մեզ հաղորդում են, որ երկու
տարի է Սանահնի ուսումնարանը փակված է
վանահօր թուրքեան պատճառով: Իշխանուհի
Քալի Արդութեանց թէպէտ նուիրում է ուսում-
նարանին, իբրեւ ուսուցչի ծախս տարեկան 200
րուր, բայց վանահայրը զրանում է վանքի փո-
ղից աւելացնել 100 րուր: Երկուսն էլ կարելի
լինէր մի օրինաւոր ուսուցիչ հրաւիրել: Գոնէ
Հաղպատի վանահայր Յովսէփ վարդապետ խա-
րաղեանից օրինակ առնել, Սանահնի վանահայ-
րը, աւելացնում է մեր թղթակիցը, որ ամեն
ջանք է թափում իր ուսումնարանը պայծառաց-
նելու:

Մեզ գրում են հետեւեալը: «Վերջին պատե-
րազմից յետոյ 1878 թւից սկսած մինչև այժմ,
զանազան տեղերից գաղթած են Արդահան 80
տնից աւելի հայեր, որոնք պարսպում են ար-
հեստներով և վաճառականութեամբ, այնպէս որ
դոքա ամենքը իրանց համար մշտական գործ
ունենով, այլ ևս չեն վերադառնալու իրանց հայ-
րենիքը: Անա չորս տարի է, որ այդ ժողովուր-
դը ոչ քահանայ, ոչ եկեղեցի և ոչ ուսումնա-
րան ունի: Փանի անգամ դիմել են Ղարսի ա-
ռաջնորդին խնդիրներով և վերջապէս ուղարկել
են աղերսագրեր Ս. Եջմիածին որ շուտով նշա-
նակեն նրանց համար մի բարեկիրթ քահանայ,
որ հող տանի եկեղեցու և ուսումնարանի հա-
մար, իսկ ժողովուրդը պատրաստ է իր հաշով
ուսումնարանի շինութիւնը կառուցանել և ունի
դրա համար պատրաստ գումար 3,000 րուր:
Բայց հոգեւոր իշխանութիւնը բոլորովին անտա-
րբ է մնում դէպի այդ անհրաժեշտ աղաչիւն-
գործը և չորս տարւայ ընթացքում ոչինչ կար-
գադրութիւն չէ արել այդ մասին, այն ինչ դա,
առանց ժողովրդի խնդիրներին, Եջմիածին պար-
տաւորութիւնը կը լինէր: Այդ պատճառով Ար-
դահանի հայերից շատերը իրանց ննջեցեալներին
թաղում են առանց քահանայի, մկրտում են ե-
րեւնաբերին միմիայն աղօթք անելով Աստու-
ծուն նորածին մանուկի համար, հաղորդութիւն
են ընդունում իրանց մէջ աղօթք անելուց յե-
տոյ, փոքր ինչ հալով և ցրտով: Անա հետեւեալ-
ներ հոգեւոր իշխանութեան անհոգութեան և իր
պարտաւորութեան չը կատարելուն»:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Անա քանի տարի
է արդէն որ Նուխու հոգեւոր կառավարութեան
մէջ ծառայում են տէր Սիմէօն, տէր Մովսէս և
քարտուղար Կարապետ: Գոքա իրանց բաղմա-
թիւ գեղծութեանով յայտնի են արդէն Ղարա-
բաղի կոնսիստորիային, բայց նրանց փոխելու
համար ոչինչ կարգադրութիւն չէ լինում: Այժմ
երբ Նուխում յաջորդ չը կայ, ամենայն ինչ
այդ երեքի կամուրջանութիւնից է կախված
ժողովրդի համբերութեան չափը արդէն անցած
է. նա միանգամայն յուսահատված, վերջին ան-
գամ կամենում է իր բողոքը ներկայացնել հոգե-
ւոր բարձր իշխանութեանը, իսկ յետոյ ինչ կը
լինի, եթէ այս անգամ էլ նրա ձայնը չը լսվի,
— այդ դժուար է նախագուշակել»:

ՆՈՐ-ԱՍՅԱԶԷԹԻՑ հաղորդում են մեզ որ
հարցաքննութիւնները, որոնք եղան յուլիսի
սկզբներում այդ քաղաքի հայոց թէ արական
և թէ իգական դպրոցում շատ անբաւարար էին:
Աշակերտները և աշակերտուհիները շատ թոյլ
էին ամեն առարկաներից: Ուսուցիչները վար-
վում էին աշակերտուհիների հետ, ինչպէս թըշ-
նամիների հետ, անզաղար յարձակվելով նրանց
վրա և մատաղ սերունդի հասկացողութեան հա-
մար անուշեղի հարցեր առաջարկելով, որ ի-
րանք էլ, ինչպէս երևում է, չէին հասկանում:
Թղթակիցը աւելացնում է որ Նոր-Բայազէթի
հայոց դպրոցների հոգաբարձութեան և ուսու-
ցիչների մէջ մեծ թշնամութիւն է տիրում: Այդ
թշնամութեանը զոհ է գնում դպրոցների աւ-
րոյշ գոյութիւնը:

ՂԱԼԱՐԻՑ մեզ գրում են որ այդ քաղաքի
երկուսեւ դպրոցների մէջ հարցաքննութիւնները
վերջացան յուլիսի սկզբներում: Աշակերտները
ամեն առարկաներից շատ թոյլ էին:

Յայտնում ենք, որ «Մշակ» մէջ չեն ընդուն-
վում յայտարարութիւններ առանց այդ յայտա-

րարութիւնների տպագրութեան փողը կանխիկ
ստանալու:

ԱԼԵԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են, «Ձեր
թղթակիցը ձեզ արդէն գրել է, որ Ամբրոսիոս
Ռուբինեան վարդապետը այժմ այստեղ է: Անա
երկու տարի է որ սա ամբողջ Ռուսաստանում
փող է ժողովում իր երեւակայեալ երկրագործա-
կան դպրոցի համար: Հշմարիտն ասեմ, ես էլ
չեմ հաւատում որ իրագործվի նրա ուսումնա-
րանը, նա, կարծում եմ, միայն աւելի է որո-
նում փող ժողովելու: Նկատողութեան ասեմ որ
նա զեռ վարդապետ է, իսկ ամեն մի վարդա-
պետի իդէալը եպիսկոպոս դառնալն է: Այսպէս
10—15 հազար ժողովելուց յետոյ, նա կը ձգտի
եպիսկոպոսական դասազանի, կերթայ Էջմիածին
եպիսկոպոս ձեռնադրվելու, կը թողնի այնտեղ
5 մինչև 6 հազար րուր և այնուհետեւ սուս ու
փուս կիշնի Վ. Պոլիս: Այնուհետեւ գնացէք ու
նրանից հաշիւ պահանջեցէք: Ձեզ կասեն որ
այդ անկարելի է, չէ որ հանգանակած գումարը
պահվում է հոգաբարձուների՝ պ. պ. Մանթա-
շեանի և Յովհաննիսեանի մօտ: Այդ ճշմարիտ է,
բայց հոգաբարձութիւնը պահում է իր մօտ փո-
ղերը քանի որ չարունակվում է հանգանակու-
թիւնը, իսկ հանգանակութիւնը վերջանալուց
յետոյ, ինչպէս ասված էր «Փորձի» V տետրակի
յաւելումով մէջ 1879 թւին, դրամը կը յանձն-
վի ում հարկն է: Ուրեմն վերջի վերջոյ փողը
դարձեալ պիտի ընկնի Ռուբինեան հօր ձեռքը»:

ՎԱԳԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են. «Հեմարա-
նի բարձր դասարանի աշակերտները անբաւա-
րան լինելով վարժապետների դասաւանդու-
թիւնից, դիմած են եղել գերապատիւ Անդրեաս
եպիսկոպոսին խնդրելով տալ նրանց սեմինա-
րիական կուրսի վկայական, որպէս զի եթէ
հետեւել տարին էլ նոյն վարժապետները
մնան, նրանք ապա լինեն թողուլ ձեռնարանը
բայց սրբազանը անուշադիր է թողած եղել այդ
խնդիրը, մինչև որ վերջապէս աշակերտները
հրաժարվեցին քննութիւն տալուց, պնդելով
իրանց պահանջի վրա: Անա այս հիման վրա
վհեհափար Աղափիրեանց արգելադրանքն ուղարկեց
Ռուսաստան ձեռնարանական դասերի համար գիտ-
նական վարժապետներ հրաւիրելու»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒ-
ԹԻՒՆԸ

„Порядокъ“ լրագրի մէջ տպված է
հետեւեալ նամակը Բերլինից:

Բերլինի պահպանողականների աշխատանք-
ները աջողութեամբ պսակվեցան տեղական
լանդտագմերի անդամների ընտրութիւնների
ժամանակ ու այդ աջողութիւնը այնքան
նշանաւոր է, որ նրանով գրադված է այժմ
գերմանական ամբողջ մասուրը: Առժամա-
նակ այդպիսի ընտրութիւններ եղել են Բա-
վարիայի և Սակսոնիայի մէջ և պէտք է
լինեն Ելզաս-Լոտարինգիայի մէջ: Առաջինի
մէջ ընտրված են գրեթէ ամբողջապէս կղե-
ւակները, իսկ երկրորդի մէջ այդպէս ան-
ուանված սակսոնական ազգասէր պահպա-
նողականները: Վերջապէս երրորդի մէջ
ավստրո-միստների կուսակցութիւնը բոլոր-
վին անհետացել է հօրիզոնից: այդ կուսակ-
ցութեան անդամներից երկուսը հրապարա-
կապէս յայտնեցին, որ նրանք բողոքողների
կողմն են անցնում, մնացածները հրաժար-
վեցան ընտրութիւններից, իսկ այդ կուսակ-
ցութեան ստեղծող գեներալ Մանտեյֆել
պատրաստվում է հրաժարական տալ և, ե-
թէ մինչև այժմ նա հրաժարական չէ
տուել, դրա պատճառն այն է, որ Հոհեն-
ցոլերների հին ծառայ լինելով նա չէ կա-
մենում բացարձակ պախարակել կառավա-
րութեան գործողութիւնները, թէպէտ չէ
հրաժարականի մասին լուրերը դեռ չեն
տպվի լրագիրների մէջ, բայց այնու ամե-

նայնիւ նրանք ճիշդ են: Նա այլ ևս ա-
ռաջկայ գործիչը չեմ, ասել է բարձր Ման-
տեյֆել, պատմելով իր բարեկամներից մե-
կին, որ նա անպատճառ կամենում է հրա-
ժարվել իր պաշտօնից: Եւ ճշմարիտ այն
մարդը, որ իր նշանաբան է ընտրել „նոր
վերքեր չը հասցնել, այլ հնէրը դարմանել“,
այլ ևս չէ կարող Ելզաս-Լոտարինգիայի
փոխարքայ լինել, քանի որ կառավարու-
թիւնը իր պաշտօնական լրագիրների մէջ
յայտնեց, թէ „բարձր Մանտեյֆել, վեր-
քերի մասին խօսելով, ի նկատի ունէր այն
վերքերը, որոնց հասցրեց Ելզաս-Լոտարին-
գիային Ֆրանսիան իր 200 ամեայ տիրա-
պետութեամբ այդ երկիրների վրա և ոչ
թէ Գերմանիայի հասցրած վերքերը“:
Դրանից յետոյ բարձր Մանտեյֆել մի քանի
անգամ ձանապարհօրդելով Բերլին համոզ-
վեցաւ, որ ոչինչ չէ կարող անել և այժմ
տեղը զիջանում է նրանց, որոնք աւելի
համապատասխանում են նրա նախկին բա-
րեկամ իշխան Բիսմարկի նպատակներին և
մտադրութիւններին:

Բայց ես չը մեկնեցի, թէ ովքեր են
„սակսոնական ազգասէր“ պահպանողական-
ները և բաւարական կղերականները, որոնք
նոյնպէս իրանց „բաւարական ազգասէր“ են
անուանում: Դրանք պարտիկուլյարիստ-
ներն են, այն մարդիկ, որոնք բացարձակ
ընդգծել են գերմանական միութեանը պրու-
սական կայսերութեան ձեռով, որ կազմա-
կերպել է 1866 և 1870 թուականներից
յետոյ իշխան Բիսմարկ իր քաղաքականու-
թեամբ: Դրանք այն մարդիկն են, որոնց
լրագիրները գերմանական կայսերութեան
ստեղծելը „ստուգող պատիժ“ անուանեցին:
Պէտք է նկատել, որ վերջին ժամանակնե-
րում իրան ազատամիտ ձեւացող բաժարա-
կան կառավարութիւնը այնպէս փոփոխեց
ընտրողական շրջանները, որ կղերականները
պէտք է փոքրամասնութիւն կազմէին: Գեր-
մանական միութեան կողմնակիցները չա-
փազանց գոհ էին, կարծելով, որ նրանց ա-
տելի կղերականները կատարելապէս ոչնչաց-
րած են Բաւարիայի մէջ, գոհ էին մինչ
այն ժամանակ, երբ իրականութիւնը նրանց
ապացուցեց, որ կղերականները իսկապէս
աւելի ուժեղ էին: Պէտք է իմանալ, որ
Սակսոնիայի մէջ պարտիկուլյարիստները
բացի պալատական շրջաններից չէին երե-
ւում ոչ հասարակութեան և ոչ ժողովուր-
դի մէջ, որ հաշտվեցան ոչ թէ միայն
գերմանական միութեան, այլ և պրուսական
կայսերութեան մօքի հետ: Դրա պատճառն
այն է, որ այժմ Սակսոնիայի մէջ թագա-
ւորող տուրը համակրելի չէ ժողովրդի
մէջ, իսկ թագաժառանգին, այժմեան ծե-
լունի և անորդի թագաւորի եղբորը, ժո-
ղովուրդը կատարելապէս տուում է: Լայպ-
ցիգի մէջ, չը նայելով սօցիալական ուղղու-
թեան զարգացմանը, Պրուսիայի հետ պե-
տական միութիւն կազմելու միտքը չափա-
զանց համակրելի էր: Այդպէս էր տարի ու
կէս սրանից առաջ, իսկ այժմ Լայպցիգը
մնացած Սակսոնիայի հետ միասին ընտրու-
մ են իրանց ներկայացուցիչներ մի կողմից
սօցիալ-դեմոկրատներին, իսկ միւս կողմից
պարտիկուլյարիստներին:

Սրանք են իշխան Բիսմարկի ներքին քա-
ղաքականութեան և պաշտօնական լրագիր-
ների աշխատանքների պտուղները: Ի հար-
կէ կայսերական և տեղական ընտրութիւն-
ների մասին օրէնքների զանազանութիւնը
կազդէ լայնատաղի անդամների ընտրու-
թեան վրա: Ընդհանուր բուհարկութեան
չնորհիւ լայնատաղը աւելի շատ ազատա-
միտ անդամներ կունենայ, քան թէ տեղա-

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
անունով ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՅ
զատագրիքը լոյս տեսաւ և ծախում է
կովկասեան ու կենտրոնական գրավաճառանոցներում:

Գինն է 40 կոպէկ:

Իսկ ով ցանկանում է հաւր 35 կոպէկով ձեռք բերել, գինը **ԿԱՆԻԿ ԿՃԱՐԵԼՈՒ** և ճանապարհածախսը իր վրա առնելով:

Թող գիմէ մեզ հետեւալ հասցեով.
„Въ Тифлисѣ. — На Авлабарѣ. И-
вану Петровичу Назарьянцѣ.“

144 Արծրունու գաղէթա 144
ամենաէական պահեստ
մեքէլի և հայելիների:

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ ОТДАЮТСЯ МАГАЗИНЫ ВЪ НАЙМЫ

Въ галлерей имѣются: вода, газовое
освѣщеніе и телеграфная станція.
3—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՆԻՄ
ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՄԱԳԱԶԻՆՆԵՐ
Գաղէթում կայ ջուր, գազի լուսավորու-
թիւն և հեռագրական կայարան:
3—10

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ
ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ. մուրա-
նէր, կոնֆետներ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա-
ՄԱՆԵՂԻՆ, բոխիներ, թասեր, երես լուս-
նալու ամաններ, չաշիկներ, ԲԱԺԱԿՆԵՐ,
կերակրի ամաններ (սյւճի), մատուցարան-
ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ,
ԳՐԻՉՆԵՐ, Թուղթ, մատիաներ, տետրակ-
ներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, ալբոմ-
ներ, ՄԱՀԱՅԱԿԱՆՆԵՐ, ՀԱԳՈՒՍՑ, արիկո, պա-
րուսին, Թաշկինալներ, երեսբիչներ, կլեմ-
կա, գուլբաներ, ԹԱՄԲԵՐ, ՊՈՐՏ-ՎԷՑՆ, խե-
րես, կոնեակ և այլն: ԹէՑ մեծ քանակու-
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒԴԸ
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՉ:

Մի և նոյն տեղը էժան գնով. ԵՐԲԵՏ մա-
գնեղիա, խմոր ԾԱՐԱԽԻ գէժ, ԽԻՆԱՅԻ գի-
նի ջերմի գէժ, կարթուրան փճի, հեղուկ
և ՍԱՊՈՆ, բժշկական Թուղթ փառերկրոգե-
տի համար, պարսկական փոշի:

38—100

Ս Ո Ւ Ա Կ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ազգային լիակատար ԵՐԳԱՐԱՆԻ ա-
ռաջին հատորը երկրորդ տպագրութեամբ,
ՓՈՓՈՒՄԾ, որի մէջ գտնվում են բա-
ցի այն բոլոր երկրորդ, որոնք յայտնի են
ժողովրդին, նոյնպէս նոր ԵՐԳԵՐ, հատըն-
տիր ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
և ԱՐՁԱԿ գրութեան:

Վաճառվում է. ԹԻՖԼԻՍ՝ կենտրոնական
և կովկասեան գրավաճառանոցներում, Ե-
րբեմն՝ պ. Աբգար Գուլամիրեանցի խանութ-
թում, ԲԱԳՈՒ՝ պ. պ. Գրիգոր Գիլգարեան-
ցի և Ս. ՏԵՐ-ՕՏԱՆԻԱՆԵՐ խանութներում:
Օտարաբաղադրանքը կարող են գտնուել
ԲԱԳՈՒ նոյնպէս **ՍՈՒԱԿ** խմբագրի-
չատարակչին այս հասցեով. Авакы Ла-
заревичу Григоріанцу, въ Баку.

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 րուբլ:
Աւար Գրիգորեանց: 1—5

ՀԷՆՑ ԻՍԿԱՑՆ ՍՏԱՑՎԵԼ են
մեծ քանակութեամբ հրացաններ, ԲԷ-
ՎՈԼՎԵՐՆԵՐ, փամփուշտներ, ԹԷՑ
առաջին տեսակի, բոխիներ և այլն: **ՉՈԿ**
ԲՈՐ (choke bore) **ՀՐԱՑԱՆՆԵՐ**
George Dau-ի գործարանից 120 ր., ԲԷ-
ՎՈԼՎԵՐՆԵՐ բոլորից 11 րուբլուց, 700 ՄԱՀ-
ՃԱԿԱՆՆԵՐ 5—40 րուբլ: Ծախվում
է նոյնպէս պարուսին կիսագնով և ալբոմ-
ներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ**
ՄԷՉ: 3—12

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ
Цѣна 25 коп.

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. Ն Ո Ր Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Տեղափոխվեցաւ Գաւն օֆ Կալա փո-
ղոցից աւելի յարմարաւոր տեղ, այն է՝
ՏՐՈՑԻՑԻ փողոցը № 11. փ օ ս տ ա ն
եռակի քուշան Ընդունվում են ամեն լե-
զուով և ամեն տեսակ պատուէրներ ամե-
նամատչելի գներով:

Նոյն տպարանում ընդունվում են և պա-
տուէրներ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՓՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ
տպագրութեան համար փայտի և պղնձի
վրա:

„Խ Ե Ն Թ Ը“

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԲՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՑՅԻԻ

Տպագրւած մաքուր թղթի վրա, զիրքը բաղ-
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է
„Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական
գրավաճառանոցում“, „կովկասեան գրա-
վաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեան-
ցի մօտ, և պ. պ. Դաւիթեանցի, Բաղար-
ջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագազին-
ներում:

Գինն է 1 րուբլ 20 կոպ:

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ-
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց
ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերագործ-
նող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱ-**
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կոպ:
ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ**
ԽԻՂ, մազերը ամրացնելու հա-
մար, 1 ր. ամանը վրձին գլխա-
յաւի գէժ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-**
ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:
3—100

ՎԻԷՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազմաթոռներ) ծախվում են մեծ
քանակութեամբ և մանր, միջին փողոցում կատարվաց փողոցի անկիւնում Մի-
քայել ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրանքը կարող են գիմել այս հասցեով. Тифлисѣ, Михайлу
Н. Теръ-Никогосову.

45—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՑՅԻԻ „ԽԵՆԹԸ“** անու-
նով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք գիմել ՇՈՒՇԻ,
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահմադ-Յախթեանցի տպարանը: ԲԱԳՈՒ՝
պ. Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷՉ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБЪЛУ АН-
РВСЯНЦУ.

ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂ մազերով **ԿԱ-**
ՍՈՒՐՁԻ մօտ ծախվում է 18 ր., 20
ր. և 24 ր. քառակուսի սաժէնը: Հարց-
նել **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ**
ՄԷՉ: Նոյն տեղը ծախվում է 1300
քառ. սաժէն այդի Միխայիլովայա փողո-
ցի վրա, 17 ր. իւրաքանչիւր սաժէնը:
3—6

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ“
продаются слѣдующія нѣмецкія брошюры:
Die Oekonomische Lage der Armenier
in der Türkei. von Dr. GRIGOR ARZRU-
NI. Uebersetzt von A. Amirchanyanz. Preis
25 kop.
Die Hungersnoth in Türkisch-Armenien
von Dr. GRIGOR ARZRUNI. Uebersetzt von
A. Amirchanyanz. Preis 20 kop.

ՔՐԷՀՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԲԸ-
ՆԱԿԱՐԱՆՆԵՐ երկուսը հինգ տե-
նեակից բաղկացած իւրաքանչիւրը, մէկը
չորս և երեք տենեակներից բոլոր յարմա-
րութիւններով, Վազնեսենսկոյա փողոցի վը-
րա տուն № 11: Գինը խմանալ **ՎԱՍԻ-**
ԼԻ ԿԱԼԱՄԿԱՐՈՎԻ խանութում:
1—3

Ի. Ա. ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԻԱՐՈՎԻ
ՄԱՍՆԱԽՈՐ ԲԷԱԼԱԿԱՆ ԴԸՊ-
ՐՈՑԸ (Թիֆլիս, Բարձրակայա փողոց, տուն
№ 10, որտեղ առաջ գտնվում էր Ինտեն-
դանտիօ: Լրացուցիչ և սկզբնական քննու-
թիւնները կը սկսվեն ՕԳՈՍՏՈՍԻ 20-ին, իսկ
ուսումը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ին:
1—3

2ր նոյնով մաքսերի աւելանալուն տպարանները առաջվայ գներով կը ծախվեն
ԿՈՆԳՈ-ԹԷՑ 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կոպ., շատ լուս. **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 կ. և
1 ր. 40 կ., հիւսնալի **ԿԱՅՍԱՌԻ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ**
ԹԷՑ 2 ր. առանց թղթի: Անգլիական բէթովները 4 ր.—40 ր. և հրացաններ 20
ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆՍԲԻԻ ԹԱՄԲԵ-**
ՐԸ, Զնանի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տաւրոյի **ԳՐԻՉՆԵՐԸ** և Էկատրակո կախա-
շօխոյրի ծախելու համար, որոնք վարիչի հանդիսի ժամանակ ոսկէ մեդալ ստացան:
ՀՈՏԱԼԷՏ ԹԷՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65
կ. և ամենալաւը 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ
տպարաններ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆետներ
հազի գէժ 60 կ. ֆունտը:
100—100